

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 1 (36)

2019 թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի (ՊԲՀ) խմբագրական խորհրդի նիստը:

Ներկա էին՝ ԳԱԱ ակադեմիկոս, խմբագրական խորհրդի նախագահ Աշոտ Մելքոնյանը, ԳԱԱ թղթակից անդամներ Հենրիկ Հովհաննիսյանը, Մուրադ Հասրաթյանը, Լավրենտի Հովհաննիսյանը, պ. գ. թ. Վաչե Հովակիմյանը, հանդեսի գլխավոր խմբագիր, ք. գ. դ. Անուշավան Զաքարյանը: Խորհրդի անդամներ՝ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ԳԱԱ թղթակից անդամներ՝ Աելիտա Դոլուխանյանը, Լևոն Արաքահամյանը, Պավել Ավետիսյանը և ք. գ. դ. Սամվել Մուրադյանը նախապես տեղեկացրել էին, որ հարգելի պատճառներով չեն կարող մասնակցել խմբագրական խորհրդի նիստին:

Օրակարգ.

1. ԳԱԱ պարբերականների հրատարակությունների հետ կապված խնդրահարույց հարցերը:
2. Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) նոր պահանջները՝ հարցեր կապված գիտական պարբերականների հրատարակության հետ (մրցութային կարգ, ՊԲՀ-ի գլխավոր խմբագրի, նրա տեղակալի և պատասխանատու քարտուղարի հաստիքային միավորների վերականգնում):
3. Հանդեսի 2019 թ. N° 1-ի բովանդակության հաստատում:

Լսեցին.

1. «Գիտություն» հրատարակչական-արտադրական ՊՓԲԸ-ի տնօրեն Վաչե Հովակիմյանի հաղորդումը ԳԱԱ պարբերականների հրատարակության հետ կապված խնդրահարույց հարցերի մասին, մասնավորապես, դրանք մրցութային կարգով հրատարակելու առումով:

2. ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր Ա. Զաքարյանի հանգամանալից հաղորդումը ԲՈԿ-ի՝ գիտական պարբերականների հրատարակության հետ կապված նոր պահանջների, այն է՝ հանդեսի կայքէջի ստեղծման, կայքէջում պարբերականի յուրաքանչյուր համարի մասին ամբողջական տեղեկատվություն տալու վերաբերյալ: Ըստ այդմ՝ հիմնավորեց խմբագրության հաստիքների, մասնավորապես գլխավոր խմբագրի, գլխավոր խմբագրի տեղակալի հաստիքների վերականգնման անհրաժեշտությունը:

3. Հանդեսի գլխավոր խմբագիրը ներկայացրեց պարբերականի՝ 2019 թ. N° 1-ում տպագրվելիք հոդվածները:

Որոշեցին.

1. Ի գիտություն ընդունել ԳԱԱ պարբերականների հրատարակության հետ կապված Վ. Հովակիմյանի հաղորդումը: Ըստ այդմ՝ դիմել ԳԱԱ նախագահությանը, որպեսզի վերջինս գործուն քայլեր ձեռնարկի, քննարկի այդ հարցը կառավարության հետ՝ գիտության զարգացման շահերից բխող որոշում կայացնելու համար:

2. ա) «Գիտություն» ՊՓԲԸ-ին՝ ի դեմս տնօրեն Վ. Հովակիմյանի, հանձնարարել շուտափույթ լուծել հանդեսի կայքէջի ստեղծման հարցը,

բ) ՊԲՀ-ի գլխավոր խմբագրի, խմբագրի տեղակալի հաստիքային միավորները վերականգնելու (համապատասխան աշխատավարձով) մասին՝ գրավոր դիմել ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-

քարտուղար Յուրի Սուվարյանին՝ խնդիրը ԳԱԱ նախագահության առջև բարձրացնելու համար:

3. Հաստատել հանդեսի՝ 2019 թ. № 1-ում տպագրվելիք հոդվածների ցանկը, վերնագրերում կատարել մասնակի փոփոխություններ (այսպես, օրինակ, Ազատ Եղիազարյանի հոդվածի վերնագիրը՝ «Միլվա Կապուտիկյանը, նրա ժամանակը և նրա սերունդը», դարձնել՝ «Միլվա Կապուտիկյանը և նրա ժամանակակիցները», բացի այդ, հոդվածը հանել համարից՝ հեղինակի հետ առաջարկված նոր վերնագիրը, նաև այլ հարցեր համաձայնեցնելու համար): Հատուկ ուշադրության առարկա դարձնել «Մեր երախտավորները» և «Մեր հոբելյարները» խորագրերի տակ տպագրվելիք նյութերին՝ գիտաշխատողների տարելիցների, հոբելյարների հետ կապված:

Խմբագրական խորհրդի նախագահ,
ԳԱԱ ակադեմիկոս

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր

Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 2 (37)

2019 թ. հունիսի 19-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի (ՊԲՀ) խմբագրական խորհրդի նիստը:

Ներկա էին՝ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը (խմբագրական խորհրդի նախագահ), բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը (գլխավոր խմբագիր), ԳԱԱ թղթակից անդամներ Աելիտա Դոլուխանյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Մուրադ Հասարթյանը, Լավրենտի Հովհաննիսյանը, Լևոն Աբրահամյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Սամվել Մուրադյանը, պատմական գիտությունների թեկնածու Վաչե Հովակիմյանը:

Բացակայում էին՝ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը:

Օրակարգ.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2019 թ. մայիսի 14-ի հրամանը՝ «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների ցանկի ձևավորման կանոնները հաստատելու մասին»:

2. Հանդեսի կայքէջի ստեղծման հարցը:

3. Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում նոր անդամների ընդգրկման հարցը:

4. Խմբագրական խորհրդի անդամների պարտականությունները:

Լսեցին.

Օրակարգային հարցերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվությամբ հանդես եկավ ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր Ա. Զաքարյանը: Ներկայացնելով ՀՀ ԿԳ նախարարի հրամանի մանրամասները, նա հատուկ նշեց, որ միջազգային չափանիշներով հրատարակվելիք գիտական հանդեսների առջև դրված նոր, լրացուցիչ պահանջները, այն է՝ կայքէջ բացելու, այն սպասարկելու, նաև անգլերեն լեզվով ներկայացնելու, հոդվածները գրախոսելու համար չկան ֆինանսական անհրաժեշտ միջոցներ, բացի այդ՝ գրագողության դեմ պայքարելու, խորհրդի անդամների կողմից խմբագրությունում կատարելիք պարտականությունների հարցերը խնդրահարույց են: Ապա առաջարկեց ՊԲՀ-ի խմբագրական կազմում Հայաստանից ընդգրկել (նախապես այդ հարցը քննարկվել է Ա. Մելքոնյանի հետ) Վահան Տեր-Ղևոնդյանին (Մատենադարանի տնօրեն), Արտակ Մովսիսյանին (ԵՊՀ-ի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ), Վարդան Դերիկյանին (ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն), ինչ վերաբերում է Սփյուռքին՝ խնդրեց առաջարկություններ կատարել:

Արտահայտվեցին.

Ա. Մելքոնյանը, Ա. Դոլուխանյանը, Լ. Հովհաննիսյանը, Վ. Հովակիմյանը: Ա. Մելքոնյանը հայտնեց, որ պատմության ինստիտուտը պատրաստ է իր կայքում տեղ հատկացնել ՊԲՀ-ի կայքէջի համար, ապա առաջարկեց խմբագրական խորհրդի կազմում Սփյուռքից ընդգրկել Լևոն Զեքիյանին (Իտալիա), Գևորգ Բարդակչյանին (ԱՄՆ), Աբրահամ Տերյանին (ԱՄՆ), Անահիտ Տոնապետյանին (Ֆրանսիա): Ա. Դոլուխանյանը հավանություն տվեց խմբագրական խորհրդի կազմում Ա. Մելքոնյանի կատարած առաջարկին:

Լ. Հովհաննիսյանը և Վ. Հովակիմյանը հայտարարեցին, որ ԿԳ նախարարի հրամանի որոշ կետերի հետ համաձայն չեն և չեն ցանկանում լինել խմբագրական խորհրդի նոր կազմում: Վ. Հովակիմյանը նաև հավելեց՝ գիտությամբ չի զբաղվում, որը ևս մեկ հանգամանք է խորհրդի նոր կազմում չընդգրկվելու համար: Լ. Հովհաննիսյանն առաջարկեց խորհրդի նոր անդամ ընտրել Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանին:

Որոշեցին.

1. Ի գիտություն ընդունել ՀՀ ԿԳ նախարարի հրամանը:
2. Հանդեսի կայքէջը ձևավորել-բացել ԳԱԱ պատմության ինստիտուտի կայքում:
3. Խմբագրական խորհրդի կազմում նոր անդամներ ընդգրկել. ա) Հայաստանից՝ Վահան Տեր-Ղևոնդյանին, Արտակ Մովսիսյանին, Վարդան Դերիկյանին, Վիկտոր Կատվայանին, բ) Սփյուռքից՝ Լևոն Զեքիյանին (Իտալիա), Գեվորգ Բարդակչյանին (ԱՄՆ), Աբրահամ Տերյանին (ԱՄՆ), Անահիտ Տոնապետյանին (Ֆրանսիա) (վերջիններիս համաձայնությունը ստանալուց հետո):
4. Հանդեսի կայքէջում տեղադրելու համար խմբագրական խորհրդի անդամները ներկայացնեն կենսագրական տեղեկատվություն՝ լուսանկարով, վերջին 5 տարում հրատարակած աշխատությունների ցանկը, նշեն գիտական հետաքրքրությունների ոլորտները և ըստ այդմ՝ հանդեսի աշխատանքներին իրենց մասնակցության չափաբաժինը:

Խմբագրական խորհրդի նախագահ,
ԳԱԱ ակադեմիկոս

Ա. Մելքոնյան

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների
դոկտոր

Ա. Զաքարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 3 (38)

2019 թ. հունիսի 12-ին տեղի ունեցավ «Պատմաբանասիրական հանդես»-ի (ՊԲՀ) խմբագրական խորհրդի նոր կազմով առաջին նիստը:

Ներկա էին՝ Աշոտ Մելքոնյանը (խմբագրական խորհրդի նախագահ), Հենրիկ Հովհաննիսյանը, Մուրադ Հասրաթյանը, Նիկոլայ Հովհաննիսյանը, Լևոն Աբրահամյանը, Արտակ Մովսիսյանը, Վահան Տեր-Ղևոնդյանը, Սամվել Մուրադյանը, Վարդան Դերիկյանը, Աելիտա Դոլուխանյանը (գլխավոր խմբագրի տեղակալ), Վիկտոր Կատվայանը և Անուշավան Զաքարյանը (գլխավոր խմբագիր):

Բացակայում էին՝ Պավել Ավետիսյանը և Սփյուռքից խորհրդի անդամներ ընտրված Գևորգ Բարդակչյանը, Լևոն Զեքիյանը, Աբրահամ Տերյանը, Անահիտ Տոնապետյանը:

Օրակարգ.

Հանդեսի 2019 թ. N° 2-ի բովանդակության հաստատում (զեկ. Ա. Զաքարյան):

Լսեցին.

ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր Ա. Զաքարյանի հանգամանալից հաղորդումը համարում տպագրվելիք հոդվածների վերնագրերի ու դրանց բովանդակության մասին:

Արտահայտվեցին.

Ելույթներ ունեցան և զեկուցողին հարցեր ուղղեցին (հիմնականում հոդվածների վերնագրերին առնչվող)՝ Ն. Հովհաննիսյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը, Ա. Մովսիսյանը, Ս. Մուրադյանը, Ա. Դոլուխանյանը, Վ. Կատվայանը:

Որոշեցին.

Հաստատել ՊԲՀ-ի 2019 թ. N° 2-ի բովանդակությունը՝ փոփոխելով Նարինե Մելքոնյանի և Աշոտ Սարգսյանի հոդվածների վերնագրերը: Ն. Մելքոնյանի «Հայերենի հոլովական իմաստների արտահայտումը իսպաներենի DE նախդիրով» հոդվածի վերնագիրը դարձնել՝ «Հոլովական որոշ իմաստների արտահայտումը իսպաներենի DE նախդիրով (հայերենի հետ զուգադրությամբ)», իսկ Ա. Սարգսյանի հոդվածի վերնագիրը՝ «Արտաքին քաղաքականությունը որպես պետականության ռեսուրսի և արժեքային համակարգի ածանցյալ (մ. թ. ա. II – մ. թ. IV դդ.)» դարձնել՝ «Պետականության ռեսուրսը և արժեքային համակարգը՝ արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոններ (մ. թ. ա. II – մ. թ. IV դդ.)»:

Խմբագրական խորհրդի նախագահ,
ԳԱԱ ակադեմիկոս

Ա. Մելքոնյան

Գլխավոր խմբագիր,
բանասիրական գիտությունների դոկտոր

Ա. Զաքարյան